ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՏԻԿԻՆ Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Առաքելյան.

Ի պատասխան Ձեր 09.12.2019թ. հ.01/62 գրության՝ տեղեկացվում է, որ ընկերության հետ կնքված պայմանագրի հավելված տեխնիկական բնութագրով սահմանվել են գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողության, ամանորի տոնական միջոցառումների համերգային ծրագրերի, Սուրբ ծննդյանը նվիրված միջոցառումների և ամանորյա տոնավաճառի մշակութային միջոցառումների իրականացման մի շարք պահանջներ և ծառայությունների, աշխատանքների ապահովումներ:

Ճանաչված երաժիշտ Գորան Բրեգովիչի հոնորարը, ինչպես նաև կեցության ծախսերը սահմանված չեն որպես առանձին ծառայություն և համապատասխանաբար՝ որպես ծախսային հոդված:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ս.թ. դեկտեմբերի 11-ին Երևանի քաղաքապետի տեղակալ Տ.Վիրաբյանի մամուլի ասուլիսի ընթացքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ այն կազմում է շուրջ 65000 (վաթսունհինգ հազար) եվրո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ